ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

Հասցե. ՀՀ Արագածոտնի մարզ 3103, ք.Ապարան,
Բաղրամյան 26
Հեռ./ֆաքս +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ aarhusaparan@mail.ru
info_aparan@aarhus.am

ՀՀ Հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի նախագահ
Ռոբերտ Նազարյանին

Ապարանի Օրհուս կենտրոնի
համակարգող՝ Նատալյա Մանուկյանից

05.03.2014.

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Նազարյան.

Արագածոտնի մարզի Օհանավան և Կարբի համայնքների բնակիչները անհանգստացած են և իրենց մտահոգություն են հայտնում իրենց խնձորի այգիները սնուցող ոռոգման ջրանցքի վրա նոր ՀԷԿ-ի կառուցման առնչությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները,
ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը և հավաստի տեղեկատվության տրամադրումը՝ խնդրում եմ Ձեզ Ապարանի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Նախատեսում է արդյո՞ք «ԳԱՀԱ էներջի» ՍՊԸ-ն նշված համայնքների տարածքում ՀԷԿ-ի շահագործման աշխատանքների իրականացում,
2. Լիցենզիայի գործողության ժամկետն ու համարը /առկայության դեպքում՝ խնդրում ենք տրամադրել այդ ընկերության լիցենզիայի պատճենը /.
3. ՀԷԿ-ի հզորությունն ու արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը.
4. ՀԷԿ-ի ջրաղբյուրները.
5. Ջրօգտագործման թույլտվության ամսաթվերը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):
Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:
Հարգանքով՝
Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝ Նատալյա Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՄԱՐՏԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 566072, ՖԱՔՍ (374-10) 525563

« 13 » մարտի 2013թ.

№ ՍԱ-393ք

*Ապարանի բնապահպանական տեղեկատվության*
*հասարակական Օրհուս կենտրոնի*
*համակարգող տիկին Ն. Մանուկյանին*

Ի պատասխան Ձեր 05.03.2014թ.
գրության

Հարգելի տիկին Մանուկյան,

Հայտնում եմ, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «ԳԱՀԱ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման կամ շահագործման համար որևէ լիցենզիա չի տրամադրվել: Ուստի, հիդրոէլեկտրակայանի կառուցման (շահագործման) վերաբերյալ Ձեր մատնանշած տեղեկատվության տրամադրումը դուրս է հանձնաժողովի իրավասության շրջանակից:

Ինչ վերաբերում է ընկերությանը տրամադրված ջրօգտագործման թույլտվությանը կամ ջրառքյուրներին, ապա նշված հարցերով անհրաժեշտ է դիմել ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն:

*Ս. Արաբաջյան*

Կատարող՝ Ս. Պետրոսյան ☎ 56-49-27 (316)